

## 20. Կինոարտադրություն

Հանրապետության «Հայֆիլմ» և «Հայկ» պետական կինոստուդիաներում 1997-2003թթ. թողարկվող 25 ֆիլմերից 2003թ. ավարտվել է 20 ֆիլմերի արտադրությունը: «Հայֆիլմ» կինոստուդիայում շարունակվում է 5 անավարտ ֆիլմերի արտադրությունը, որոնց ավարտը նախատեսված է 2004 և 2005 թվականներին:

Ավարտված ֆիլմերի ընդհանուր արտադրական ծախսերը կազմել են 561.1 մլն. դրամ, որից 143.0 մլն. դրամն այլ արտադրանքի և ծառայությունների ծախսերն են: Ընդհանուր արտադրական ծախսերի 77.1%-ը կան 432.7 մլն. դրամի ծախսերն իրականացվել են 2003թ. (143.0 մլն. դրամ՝ այլ արտադրանք և ծառայություններ):

### ՀՀ պետական կինոստուդիաների գործունեությունը, 2003թ.

Ավարտված ֆիլմերն ըստ տեսակների		Ֆիլմերի քանակը, միավոր	Թողարկման տարեթիվը	Արտադրական ծախսերը, մլն. դրամ	
				ընդամենը	որից՝ 2003թ.
<b>«Հայկ» կինոստուդիա</b>					
Լիամետրաժ	«Պետական սպանություն»	1	2002	3.2	3.1
	«Հայերը Սանկտ-Պետերբուրգում»	1	2003	4.5	4.5
	«Արամ Խաչատրյան»	1	2003	7.2	7.2
Փաստավավերագրական ֆիլմեր	«Ազգային խաղեր»	1	2002	2.2	2.2
	«Նամակներ Սիբիրից»	1	2002	2.7	2.6
	«Մոմիկ»	1	2002	2.9	2.1
	«Ռուսական եկեղեցին Հայաստանում»	1	2003	2.1	2.1
	«Հերունի»	1	2003	3.1	3.1
	«Մենք ընտրում ենք»	1	2003	3.6	3.6
	«Մոռացված կղզիների բնակիչները»	1	2003	3.0	3.0
	«Մեր եկեղեցին և հավատքը»	1	2003	2.3	2.3
	Կինոֆիլմեր	«Քարե վկաները»	1	2002	4.1
	«Դեբյուտ»	1	2003	4.2	4.2
Ընդամենը		13		45.1	42.0
<b>«Հայֆիլմ» կինոստուդիա</b>					
Լիամետրաժ	«Աշուղ Ջիվանի»	1	2002	170.0	70.0
Փաստավավերագրական ֆիլմեր	«Արամ Խաչատրյան» /Օրորոցային/	1	2003	8.0	8.0
Անիմացիոն	«Սասունցի Դավիթ» 3-րդ սերիա	1	2003	54.9	54.9
	«Երեք զանգակ»	1	2002	43.1	17.8
	«Պանդուկը» /Հեքիաթ/	1	2003	45.0	45.0
Տեսաֆիլմեր	«Սև սպիտակ ծիածան» /Սկիզբը/	1	2003	8.0	8.0
	«Դրախտ որոնելիս»	1	2003	44.0	44.0
Ընդամենը		7		373.0	247.7

2003թ. «Հայֆիլմ» և «Հայկ» կինոստուդիաների ֆինանսական միջոցների մուտքը կազմել է 547.7 մլն. դրամ, որի 81.8%-ը կան 448.1 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 0.3%-ը կան 1.8 մլն. դրամ՝ վարձակալությունից, 17.9%-ը կան 97.8 մլն. դրամ՝ այլ եկամուտներից:

Կինոստուդիաների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 548.1 մլն. դրամ: Աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կազմել են ընդհանուր ծախսերի

39.7%-ը (217.6 մլն.դրամ), ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 26.6%-ը (145.7 մլն. դրամ), նյութական ծախսերը՝ 12.6%-ը (68.8 մլն. դրամ), պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 10.6%-ը (58.4 մլն. դրամ), հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը՝ 3.7%-ը (20.2 մլն. դրամ), գործուղման ծախսերը՝ 2.5%-ը (13.9 մլն. դրամ), այլ ծախսերը՝ 4.3%-ը (23.5 մլն. դրամ): ֆինանսական միջոցների մնացորդը տարեվերջին կազմել է 5.7 մլն. դրամ: